նայն ինչ ընդունայն է. այլ արդ՝ եթէ ընդունայն և եթէ արժանի և եթէ հարկաւոր, որում կամք ընթերցողիդ ընթանասցէ ընդունիլ, այլ բարիոք և բարեդունեղ լինի 'ի վերայ ամենայն ընութեան մարդոյ, և յոյժ հարկաւոր է ջանալ և պահել պատիւն զօրութեան հոգւոյ մերոյ, որում աւանդեցաւ մեզ 'ի փչմանէ Տեառնէ և Արարչէ մերմէ, զի վարեսցուք զկեանս մեր իբր մարդւոյ բանականի և արժանի պատուոյ, ոչ 'ի ընութենէ եռացեալ տղայութենէ իբր դազանաբարոյ, և ոչ 'ի ընութենէ սասանեալ ծերութենէ իբրև ծուլացեալ, այլ միջահասակ և կատարեալ ընութեամբ բանական զօրութեամբ հոգւոյ իբրև մարդ կատարեալ՝ պարտ է ընտրել մեզ վարք, և կարգ, և Օրէնք վասն վարուց կենաց մերոց և լծորդել փոփոխական ընութիւնս մեր ընդ անշարժ Օրինօք, զի եթէ ժամանակ ընդ ժամանակս կենաց մերոց ըստ խառնուածոց ընութեան մերոյ միտս մեր ձկտիցէ առ 'ի գործս անասնոց և անբանից։ Շղթայք կապանաց Օրինաց մերոց պնտելով՝ սասանեցուցէ ընութեանս մերոյ և Օրինօք դատապարտեսցի, զի կացցուք և մնասցուք ամենեքեանս բարեպէս ընդ կարգ և սահմանս մերոյ Օրինաց, որ ընտրեցեալ 'ի լրումն ժամանակէ ընութեանց մերմէ, զի սովաւ արդարասցի դատաւորն և սովաւ ընդունեսցի մեղաւորն պատիժս իւր վասն մեղաց գործոյ ձեռաց իւրոյ, և սովաւ